«ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

«23» հունվարի 2001 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2001 թվականի № 48

քաղ. Երևան

«Հայաստանի ամերիկյան համալսարան» ՍՊԸ» համատեղ ձեռնարկության վերակազմակերպման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը լիազորություններ վերապահելու մասին

«Հայաստանի ամերիկյան համալսարան» ՍՊԸ» համատեղ ձեռնարկությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխի պահանջներին համապատասխան հիմնադրամի վերակազմակերպվելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կողմից «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի հիմնադրի լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ Երևանի Մարշալ Բաղրամյան պողոտայի N 40 շենքը հանձնել Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարության տնօրինությանը:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը և Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարությանը՝

մեկամսյա ժամկետում ավարտել նշված շենքի հանձնման-ընդունման աշխատանքները և գույքային իրավունքների պետական գրանցումը:

4. Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին հանձնել Երևանի Մարշալ Բաղրամյան պողոտայի N 40 շենքի անհատույց օգտագործման իրավունքը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի հունվարի 23-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ